

**Մ.Գ. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**ԱՐՄՅԱՆՈ-ԿՈՐԴՏԻՔԻ ՕՏՆՈՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՄՅԱՆՔԻ ՄԵՄՈՒՐՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ ԵՆԻ ԿԱՆՈՆԱԿՆԵՐԸ**

Արմյանական մեմուարները 20-րդ դարի համարում են լայն շրջանում հասանելի և խորապատկերված նյութ, որը հնարավորություն է տալիս խորապատկերել արմատական հարաբերությունները, որոնք այսօր արդեն շատ ակտուալ են:

Երևանում 11-12 դարերից սկսած հայտնի են արմատական և քրդական տեղաբնակիչների հետ կապված խրոնիկաները: Դիտարկվել են արմատների ծագումնաբանական փնջերը տարբեր լեզուներում:

**Կարևոր բառեր:** մեմուարներ, արմատական հարաբերություններ, ազգային լեզու, անհավատարմություն:

**M.H. HAYRAPETYAN**

**ARMENIAN-KURDISH RELATIONS IN THE 20th-CENTURY  
ARMENIAN MEMOIRS**

The 20th-century Armenian Memoirs provide a rich material to deeply perceive the Armenian-Kurdish fatal relations, which is a very modern issue. The few Kurdish tribes having appeared in the Armenian Plateau since the 11-12 centuries, comprised almost half of the population of Western Armenia at the beginning of the 20th century, and the absolute majorly in the 21st century.

**Keywords:** memoirs, Armenian-Kurdish relations, national language, apostacy.

ՀՏԴ 81'373.6(479.25)

**Գ.Վ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

**ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՄԱՏՆԵՐԻ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

Կատարվել է հայերեն արմատների բառաքննական հետազոտություն: Տույց է տրվել, որ հնդեվրոպական լեզվաբանության մեջ ըստ պատշաճի հաշվի չեն առնվել իմաստային և քրդական տեղաբնակիչների հետ կապված խրոնիկաները: Դիտարկվել են արմատների ծագումնաբանական փնջերը տարբեր լեզուներում:

**Առանցքային բառեր.** նոստրատիկ լեզվաբանություն, հնչյունական օրենքներ, իմաստային և քրդական տեղաբնակիչ, ծագումնաբանական փնջեր:

Հնդեվրոպական լեզվաբանության մեջ արմատների ստուգաբանության հիմնական մեթոդը եղել և մնում է իմաստով նույնական կամ իմաստով մոտ, ինչպես նաև հնչյունական որոշակի նմանություն ունեցող արմատների համեմա-

տությունը: Ընդ որում, գերակա են համարվել գլխավորապես հնչյունական օրենքները: Վաղուց գոյություն ունեցող հնչյունական օրենքները և նրանց հիման վրա սետեղծված հնչյունական համապատասխանությունների աղյուսակները ոչ միշտ են իրենց արդարացնում: Նոստրատիկ լեզվաբանության զարգացմանը զուգընթաց և նորանոր փաստերի ի հայտ գալով՝ հնչյունական օրենքների դերը նոր գնահատականներ է պահանջում: Բառաքննական հետազոտությունները ցույց են տալիս, որ ժամանակին թերագնահատվել են տիպաբանական փաստերը, գրեթե հաշվի չեն առնվել իմաստային և քերականական տեղաշարժի հետ կապված իրողությունները: Բազմաթիվ ծագումնաբանական փնջերի գոյությունը ոչ միայն տարբեր, այլև միևնույն լեզվի գրական և բարբառային տարբերակներում կասկածի տակ է դնում հնչյունական օրենքների առաջնայնության գաղափարը:

Պատմահամեմատական լեզվաբանության հիմնաքարային օրենքներից մեկը Գրիմի օրենքն է: Հետագայում հայտնաբերվեցին այլ հնչյունական օրինաչափություններ, և համեմատական լեզվաբանության, նախ և առաջ հնդեվրոպաբանության մեջ ավանդույթ դարձավ արմատների ցեղակցությունը որոշելիս հիմնվել գերազանցապես հնչյունական օրենքների վրա: Սկզբնական շրջանում լեզվաբանների կուտակած լեզվական նյութը շատ չէր: Լեզվաբանները նկատել էին միայն ամենակներախ օրինակները: Հետագայում նկատելի դարձան բազմաթիվ բացառություններ, որոնք խախտում էին հնչյունական օրինաչափությունները: Սակայն հնչյունական օրենքները մնացին հիմնական և գրեթե միակ կովանը հնդեվրոպաբանների ձեռքին:

Նոստրատիկ լեզվաբանության զարգացումը նոր խնդիրներ էր առաջադրում: Հայտնաբերվեցին տարբեր լեզվաընտանիքների լեզուների միջև գոյություն ունեցող զարմանալի բառային և քերականական նմանություններ: Դրանց ուսումնասիրությունն ու դասակարգումը նոր մոտեցումներ էին պահանջում: Նոր մեթոդաբանության բացակայության պատճառով, ցավոք, ընդհանուր հայեցակարգի մեջ լուրջ փոփոխություն գրեթե չեղավ:

Դիտարկենք հայերենի, հ.-ե. այլ և ֆ.-ու. որոշ լեզուների բառային և քերականական ընդհանրություններն արտացոլող որոշ նոր մոտեցումներ:

I. Բառաքննական հետազոտությունները ցույց են տալիս, որ շեղումները հնչյունական օրենքներից շատ են: Օրինակ, հնդեվրոպաբանության մեջ ընդունված հ.-ե.w/v - հայերեն ց համապատասխանությունը կասկածի տակ դնող բազմաթիվ օրինակներ կան հ.-ե. այլ լեզուներում: Օրինակներ՝ հայ. *գիր* ( հ.-ե. \**wer*) – լատին. *scribere* «գրել», հուն. *γραφω* «քերծել, գրել», *γραμμα* «գիր, տառ», սանս. *किरक [kiraka]* «գրող, տարեգիր»: Հայ. գործ (հ.-ե. \**vorg'*) – սանս. *कर [kar]* «անել, կատարել», *कृत [kṛtá]* «արված», հինդի *करना [karnā]* «անել», *करता [kartā]* «արված», պարս. *kardan* «անել», շվեդ. *göra* «գործ», *gjord* «արված», նորվ. *gore*

«անել», իսլանդ. *gerð* «արարք», լատին. *creare* «ստեղծել», լիտվ. *kurtis* «ստեղծվել», *kūriba* «ստեղծագործություն: Հայ. գին (հ.-ե. \*ves-no) - հ.-ե.՝ սանս. गण् [ga] «հաշվել», ավեստ. *kaēnā* «հատուցում, պատիժ», լիտվ. *kaina* «գին», լատիշ. *cena* «գին», ռուս. *цена*, ֆ.-ու. – ֆինն. *hinta*, էստոն. *hind* «գին»:

Հ.-ե. *s* – հայ. ժ համապատասխանության դեպքում դիտարկելի է հետևյալ օրինակը. հայ. *առու* (հ.-ե. \*sru) - հ.-ե.՝ սանս. अण्व [arav] «օվկիանոս, ծով», հուն. *ουρος* «ջրանցք, առու», սանս. अण् [ar] «ալիք, հոսանք, հոսք», սանս अर् [ar] «հոսել», ֆ.-ու. – ֆինն. *ouru* «առու, առվակ», հունգար. *ar* «հոսք»:

2. Գոյություն ունեն ստուգաբանական կամ ծագումնաբանական կրկնակներ, որոնք կազմում են փնջեր՝ հաճախ հենց մեկ լեզվում: Հայերենում այդպիսի կրկնակները բազմաթիվ են՝ *փայլ/ պաղ/ բալ, կեղ-/խեղ-/շեղ-շիլ, պար/ փաթ, կեղել/ խեղել, իլ/ հոլ/ յեղ-, թալալ-/ փալալ-/ ծալալ-, կոփ/ խոփ/ ոփ, խեղդ-/հեղձ-* և այլն [1]:

Հնդեվրոպական լեզվաընտանիքում հնչյունական փոփոխակները խմբավորվում են ըստ արտասանության տեղի՝ հետնալեզվային և կոկորդային /k/g/gh/k/ǵ/ǵh/kʷ/gʷ/ghʷ/H/, առաջնալեզվային /t/d/dh/s/, շրթնային /p/b/bh/m/ [2]:

Բաղաձայնների նմանտիպ հերթագայում նկատվում է նաև տարբեր լեզվաընտանիքների միջև:

Ծագումնաբանական կրկնակներ են նաև հայ. *հեղ/ուղ, հոգի/ոգի* արմատները: Այստեղ առնչվում ենք հետնալեզվայինների շրթնայնացման երևույթին, որը բնորոշ է աշխարհի բազմաթիվ լեզուների: Բառաքնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս տարբերակները շատ հին են, քանի որ հ.-ե. և ոչ հ.-ե. լեզուներում բազմաթիվ են և՛ հետնալեզվային, և՛ շրթնային հնչյուններով սկսվող օրինակները (հայ. *հետ* – ռուս. *от, ход*, հայ. *ոտն* – անգլ. *foot*, հայ. *ոգի* – ֆինն. *väki* «ժողովուրդ, մարդիկ, զորք», էստոն. *vägi* «ուժ, բանակ», հայ. *հոգի* – իսլանդ. *hugur* «միտք, հոգի», ֆինն. *henki* «կյանք, հոգի», էստոն. *hing* «հոգի»):

Բառապաշարի առավել մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ միևնույն լեզվում կան միևնույն արմատից ծագած բառեր՝ իմաստի որոշակի տարբերությամբ, որոնցից մեկը կամ մի քանիսը հնչյունական համապատասխանությունից դուրս են: Օրինակ՝ հայ. *գեղ* արմատի զուգահեռ ձևերը հ.-ե. այլ լեզուներում բառակցքում ունեն *v/w* (անգլ. *water*, գերմ. *Wasser*, ռուս. *вода*), սակայն հայերենն ունի նաև *վայթել/ոթել* ձևերը, որոնց իմաստն ակնհայտորեն նույնը չէ: Բայց չէ՞ որ հայերեն *գեղ* և անգլերեն *water* կամ ռուսերեն *вода* բառերի իմաստները ևս նույնը չեն: Հետևաբար, պետք է ենթադրել, որ հայ. *վայթելը* այս արմատի զուգահեռ ձևերից մեկն է: Համանման ձևով ունենք հ.անգլ. *gēotan* «լցնել, հոսել» շվեդ. *gjuta* «լցնել» և գերմ. *giessen* «ջրել»: Այն, որ հայ. *գեղ* արմատը հնա-

գույնն է և սկսվել է հետնալեզվային պայթականով, ապացուցվում է ֆիննաուգրական լեզուների մի շարք օրինակներով: Օրինակ՝ կոմի *кодавны* «խմել, արբել», *код* «արբած», *коддзыны* «արբել», ուղմուրտ. *кот* «թաց, խոնավ», *куд* «խմած»:

3. Հ.-ե. արմատներն ունեն գուգահեռ ձևեր նոստրատիկ մակրոընտանիքի լեզուներում, որոնք հակասում են հնդեվրոպաբանության մեջ ընդունված հնչյունական օրենքներին: Օրինակ, ֆիննաուգրական լեզուներում հայերեն *գիր* արմատի գուգահեռ ձևերն են՝ ֆինն. *kirje* «գիր», նամակ *kirja* «գիրք», *kirjoittaa* «գրել», էստոն. *kiri* «գիր», *kirjutama* «գրել»:

Հայերեն *ալի-ք* բառը հնդեվրոպաբանության մեջ ընդունված հնչյունական օրենքներով ծագում է \**pel-* նախածկից, մինչդեռ ֆիններենում գտնում ենք *aalto* «ալիք», *aallokko* «ալիքներ», *aaltoilla* «ալեկծվել», հունգարերենում՝ *hullám* «ալիք» բառը:

4. Արմատների ծագումը որոշելիս անհրաժեշտ է պարզել նրանց նախնական իմաստը: Օրինակ, հայ. *պար* բառի նախնական իմաստն է «շրջան, պտույտ», որն ապացուցվում այնպիսի բառերի առկայությամբ, ինչպես *պարոյր*, *պարագիծ*, *պարան*, *պարանոց*:

Երբեմն բառի կամ բառի արմատի նախնական իմաստը հնարավոր չէ որոշել տվյալ լեզվի արմատների քննությամբ: Օրինակ, *ակնհայտ* է, որ լատիներեն *argentum* «արծաթ» և *aurum* «ոսկի» բառերը սկզբնապես պարզ բառեր չեն եղել: Գրեթե բոլոր դեպքերում մետաղների անունները կապված են «լույս, փայլուն, արեգակ» և այլ նման իմաստների հետ: Լատիներեն *argentum* բառի արմատն է *arg-*, քանի որ *-ent/-ant* լատիներենում և այլ հ.-ե. լեզուներում հայտնի ենթակայական դերբայի ցուցիչն է: Լատիներեն *arg-/ areg-*, նշանակում է փայլուն, որ ճշտիվ համապատասխանում է հայերեն *արեգ* արմատին:

Լատիներեն *aurum* բառը կազմված է *aur-* արմատից և *-um* վերջավորությունից: Լատին. *aurum* և *aurora* բառերը համեմատելով կարելի է եզրակացնել, որ լատ. *aur-* արմատը նույնական է հայ. *ար* արմատի հետ և նշանակում է «լույս»:

Հայերեն *գերան* բառի հ.-ե. նախածկն է համարվում \**ver*□*nā* : Սակայն բառի նախնական իմաստը պարզ չէ: Ակներև է, որ թեպետ *գեր-* արմատն այսօր անհասկանալի է, այն նախապես առանձին արմատ է եղել: *-ան* կազմիչով բազմաթիվ հայերեն բառեր կան (*գուրան*, *դարան*, *եղան*, *խորան*, *խարան*, *կայան*, *հնձան*, *մառան*, *շարան*, *պարան*), որոնց մի մասի դեպքում ևս արմատի նախնական իմաստը մթազնաձ է: Ի՞նչ է այդ արմատի իմաստը: Ֆիննաուգրական որոշ լեզուներում կան այսպիսի օրինակներ. կոմի *кер* «գերան», *керавны* «հատել, կտրել», *керан* «ուրագ», ուղմուրտ. *кор* «գերան», *кораны* «հատել, կտրել», ֆինն. *hirsi* (սեռ. հ. *hirren*) «գերան»: Պարզվում է, որ *գեր-* արմատի նախնական

նշանակությունն է՝ «հատել, կտրել», իսկ *գերան* նշանակում է «ծառի հատած մասը» (հմմտ. հայ. *կտրոն*) [3]:

Որոշ արմատների իմաստը մթազնում է, երբ դառնում են անգործածական: Օրինակ, հայ. *վարդապետ* և *վարդավառ* բառերի *վարդ*- արմատը/արմատները ոչ աշխարհաբարով, և ոչ գրաբարով չեն բացատրվում: Այդ բառերն առանձին անգործածական են և կորսված: Սակայն հ.-ե. այլ լեզուների հետ համեմատությամբ որոշակի լույս է սփռում այդ արմատների նախնական նշանակության վրա:

Հայերեն *վարդապետ* բառի մեջ *վարդ* արմատը համարժեք է լատիշերեն *vārd* «բառ», *vārds* «անուն, բառ» արմատներին: Նույնն են անգլ. *word*, հոլանդ. *woord*, իսլանդ. *orð*, դանիերեն, նորվեգերեն, շվեդերեն *ord*, գերմ. *Wort*, բոլորը՝ «բառ» նշանակությամբ: Հետևաբար, *վարդապետ* նշանակում է «խոսք ասող, քարոզիչ»:

*Վարդավառ* բառի մեջ՝ *վարդ* նշանակում է ջուր: Համեմատենք սանս. *वार्* [*vār*] «ջուր», *वार्धि* [*vārdʰi*] «օվկիանոս», ավեստ. *var* «անձրև» *vairi* «ծով» լիտվ. *versme* «աղբյուր», օսերեն *furd/ford* «ծով», իսլանդ. *ur* «մանր անձրև», ֆիննա-ուգրական լեզուներում՝ ֆինն. *virta* «գետ, հոսանք, հոսք», *virrata* «հոսել, լցվել»: Միևնույն արմատից է հայերեն *վարար* բառը: Ըստ Գ. Ղափանցյանի *ուրդ* «փոքրիկ առու», -*վարդ*/-*վերդ* «ջուր» (Շաղվերդ «մեծ ջուր», Եղիվարդ «վերին ջուր» և այլն) [4]:

5. Բառերը ժամանակի ընթացքում իրենց իմաստը փոխում են: Օրինակ, հայերեն *վէր-ք* բառի դիմաց գտնում ենք հ.անգլ. *wærc* ցավ, տառապանք, իսլանդ. *verkur*, նորվեգ. *verk*, շվեդ. *värk*, բոլորը ցավ, նշանակությամբ: Հայերեն *ուտրին* արմատի դիմաց հ.անգլերենում կա *wēsten*, ն.անգլ. *waste*, որ նշանակում է «ամալի տարածք, անապատ»: Խորվաթերենում *vrag* նշանակում է սատանա: Միևնույն բառը ռուսերենում (*вѣст*) ունի «թշնամի» իմաստը: Հայերեն *այգ* արմատին համարժեք են սանս. *अग्नि* [*agni*], լիտվ. *ugnis*, ռուս. *огонь*, որոնք բոլորն էլ նշանակում են «կրակ»: Հետաքրքրական են հայ. *աւր* – կիմրերեն *awyr* «երկինք, օդ», հայ. *այլ* – կիմրերեն *ail* «երկրորդ» զուգահեռները:

Հաճախ բառի իմաստը ծագում է ավելի պարզ իմաստից: Օրինակ՝ հայ. *խառն/խառ* ոլորք արմատին համարժեք են դան. *kerne*, *kærne*, նորվեգ. *kjerne* «խնոցի», շվեդ. *kärna* «հարել (կարագը)», իսլանդ. *hræra* «խառնել», հ.անգլ. *cyrne*, ն.անգլ. *churn* «խնոցի»:

Տարբեր լեզուներում միևնույն բառը նշանակում է «երդվել» և «անիծել», «երդվել» և «հայհոյել»: Օրինակ, անգլ *to swear* «երդվել» և «հայհոյել», շվեդ. *svordom* «հայհոյանք», *svära* «երդվել, հայհոյել», կոմի-պերմ. *ëрд* «երդում», *ëрдны* «անիծել», *ëрдöm* «անեծք»: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում բառի նախնական իմաստը եղել է «բառ, խոսք, խոսել»: Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ

հայերեն *երդումն* բառի *երդ-* արմատը նախապես նշանակել է բառ, որը առանձին չի պահպանվել: Թերևս նույնն են հայ. *վարդ-ապետ, Եղի-վարդ, շվեդ.*, նորվեգ. *ord* բառ լատիշ. *vārdu* բառ, և այլն:

Երբեմն բառերը հակառակ իմաստ են ձեռք բերում: Օրինակ՝ սանս. *देव* [*devá*], լատին. *Deus*, լիտվ. *dievas*, լատիշ. *dievs* «աստված» - հուն. *διαβολος*, լատին. *diabolus*, իտալ. *diavolo*, անգլ. *devil* «ղև, սատանա»: Այս երկու իմաստները միմյանց կապողը ոգի իմաստն է՝ բարի և չար ոգիներ: Միևնույն արմատին են առնչվում հայ. *տիւ*, ֆինն. *taivas*, էստոն. *taevas*, երկուսն էլ «երկինք» իմաստով:

Հայերեն *այսահար* բառը նշանակում է դիվահար: Արդի հայերենում այն սակավ գործածական է, իսկ արմատի առաջին բաղադրիչը՝ *այս*, որ նշանակում է դև, որպես առանձին բառ հայերենում այսօր չկա: Այս արմատի համարժեքն է էտրուսկերեն *ais/eis* աստված նշանակությամբ (հոգն.թ. *aisar/ eisar*):

6. Որոշ խոսքի մասեր ծագում են այլ խոսքի մասերից: Օրինակ, դերանունները ծագում են գոյականներից: Գերմաներեն *man* դերանունը ծագում է գերմ. *Mann* մարդ գոյականից, հին գերմ. և հ.անգլ. *Werwolf* բառացի նշանակում է մարդագայլ: Հետևաբար, գերմ. *wer* դերանվան նախնական իմաստն է մարդ: Գրաբարում պահպանված *որեսար* մարդիկ գոյականի եզակին գործածական չէ: Ակնհայտորեն այս գոյականը եզակի թվում կրել է քերականական իմաստի փոփոխություն և վերածվել է հարաբերական դերանվան: Հետևաբար, հայերեն *որ* դերանվան նախնական նշանակությունն է նույնպես մարդ:

Այս օրինակները կարելի է շարունակել: *Man* մարդ բառից են առաջանում հ.-ե. մի շարք լեզուներում 1-ին դեմքի եզակի թվի անձնական դերանունը /հինդի *मैं* [*mæñ*], պարսկերեն *man* «ես»: Լատին. *ego*, հին հունարեն *εγώ*, իսլանդերեն *ég*, շվեդ. *jag, jeg*, 1-ին դեմքի եզ.թ. դերանվան նախնական իմաստն է մարդ, հոգի և համապատասխանում է հայ. *հոգի*, իսլանդ. *hugur* «հոգի» գոյականներին [5-8]:

Այսպիսով, միևնույն արմատը մեկ լեզվում կարող է լինել գոյական, մյուսում՝ դերանուն: Օրինակներ՝

հինդի *मैं* [*mæñ*] «ես», անգլ. *man* «մարդ, այր մարդ»,

հայ. *որ* (հարաբ. դերանուն), լատին. *vir*, սանս. *वीर* [*vīrá*] լիտվ. *vyras*, գոթ. *wair* բոլորը «այր մարդ», գերմ. *wer* «ով», իռլանդ. *fear* «մարդ», կիմրերեն *gwr* «մարդ, ամուսին»,

հայ. *ոմն* - լատին. *homo* (սեռ. հ. *homini*), իտալ. *uomo* (հոգն.թ. *uomini*), հ.անգլ. *gumi* «մարդ», ն.անգլ. *woman* «կին»,

լատին. ego, հին հունարեն  $\epsilon\gamma\omega$ , իսլանդ. ég, շվեդ. jag, նորվեգ. jeg, գերմ. ich *ֆինն.* joka «որ» (հարաբեր. դերանուն) - *հայ. հոգի/ ոգի*, իսլանդ. hugur «միտք, հոգի, ոգի», ֆինն. joukko «ամբոխ, ժողովուրդ», väki «ժողովուրդ, մարդիկ», էստոն. jõu/k, -gu «ամբոխ», մարիերեն enġ «մարդ», йәһг «հոգի, սիրտ»:

Միևնույն արմատից են հայ. *ինքը*, ֆինն. henki «կյանք, հոգի, ոգի», էստոն. hing «հոգի, ոգի»:

Միևնույն արմատը մի լեզվում կարող է լինել դերանվան ուղիղ, մյուսում՝ թեքված ձև: Այդպիսի օրինակներից են ռուսերեն *меня/мне* և *ego* դերանվանական ձևերը, որոնք համապատասխանում են հինդի  $\text{मैं}$  [mæɳ], լատին. ego ձևերին:

Հոդերը ծագում են դերանուններից և թվականներից: Գրեթե բոլոր լեզուներում անորոշ հոդը ծագում է *մեկ* թվականից: Օրինակ՝ անգլ. a (an) անորոշ հոդն առաջացել է հին անգլ. ā մեկ թվականից: Միևնույն կերպ իտալ. un (uno), գերմ. ein անորոշ հոդերը միևնույն *մեկ* թվականն են: Որոշյալ հոդերը ծագում են ցուցական դերանուններից (անգլ. this, that, գերմ. der, die, das և այլն) [9]:

7. Ածանցները, քերականական կազմիչները հեռավոր անցյալում եղել են իմաստակիր բառեր, արմատներ, որոնք վերացարկվելով, վերածվել են ածանցի, մասնիկի և այլն: Օրինակներ՝ *շնորհալի, տաղտկալի, ձեռնարկ ակնարկ* բառերում *-ի* և *-արկ* ածանցները նախկինում եղել են իմաստակիր բառեր, այնուհետև վեացարկվելով, վերածվել են ածանցների: Նույնն են անգլ. thoughtful, useful, careless, homeless բառերում *-ful* *-less* ածանցները /full, less/: Իմաստակիր բառեր են եղել անորոշ դերբայի վերջավորության ձևերը *հ.-ե.* որոշ լեզուներում՝ գերմ. *-en* (bringen, singen, trinken), *հ.անգլ. -an* (bringan, beran, drincan), hindi  $\text{बोलना}$  [bolnā] «խոսել»,  $\text{जलना}$  [jalnā] «վառվել»,  $\text{देखना}$  [dek'nā] «նայել»,  $\text{मरना}$  [marnā] «ծեծել», նաև  $\text{फ.}-\text{ni}$ . լեզուներում՝ հունգար. *-ni*, *-eni*, *-ani* (lenni «լինել», nezni «նայել»): Այս, ինչպես նաև ռոմանական լեզուների անորոշ դերբայի վերջավորությունը (լատին. և իտալ. *-are*, *-ere*, *ire*, իսպան. *-ar*, *-er*, *ir*, ֆրանս. *-ere*, *ire*, *re* և այլն) ունեն միևնույն «անել» նշանակությունը: Ձևով և նշանակությամբ համապատասխանում են հայ. *անն-ել/ար-ել/ան-ել* արմատին: Այս արմատին համարժեք են նաև էտրուսկ. *ar* «անել», իտեթերեն *annie/a*, պալայերեն *annie/a*, սեպ.-լուվ. *anni-* «անել, աշխատել, կատարել», լիկ. *ara* «ծես, արարողություն» ձևերին:

8. Մեկից ավելի լեզվաընտանիքների բառային նյութի քննությունը ցույց է տալիս, որ մեկ արմատը կարող է ընդգրկել մեծ իմաստային դաշտ, որը և հնարավորություն է տալիս պարզելու արմատի նախնական իմաստը: Օրինակ, հայ. *առու* բառին համարժեք *հ.-ե.*՝ սանս.  $\text{अणव}$  [arav] «օվկիանոս, ծով», հուն.  $\text{ουρος}$  «ջրանցք, առու», սանս.  $\text{अण}$  [arav] «ալիք, հոսանք, հոսք», սանս  $\text{अण}$  [arav] «հոսել»,  $\text{फ.}-\text{ni}$ . - ֆինն. *ouru* «առու, առվակ», հունգար. *ar* «հոսք» բառերը ցույց

են տալիս, որ արմատի նախնական իմաստն է ջուր: Հայերեն *ջուր* արմատի դիմաց ունենք՝ հ.-ե. լիտվ. *júres*, լատիշ. *jūra* «ծով», սանս. **जल** [*jalá*], «ջուր», **झरा** [*hara*] «ջրվեժ», **झरी** [*hari*] «ջրվեժ, գետ, հոսք», ֆ.-ու. – ֆինն. *järvi*, էստոն. *järv*, մարիերեն *ñäp/ep*, բուլղր՝ «լիճ»: Նախնական իմաստն է «ջուր»: Հայերեն *գետ* բառը նույնպես նշանակում է «ջուր»: Այս արմատի իմաստային դաշտում կարելի է գտնել ոչ միայն հ.անգլ. *gēotan* «լցնել, հոսել» շվեդ. *gjuta* «լցնել» ձևերը, այլև կիմրերեն *gwaed* և բրետոներեն *gwad* բառերը, որոնք երկուսն էլ նշանակում են «արյուն»:

9. Հնչյունափոխության դեպքերը քննարկելիս հաճախ հաշվի չեն առնվել տիպաբանական իրողությունները: Տարբեր լեզվաընտանիքների լեզուներում կատարված հնչյունափոխության դեպքերում որոշակի օրինաչափություններ են նկատվում: Օրինակ, բազմաթիվ լեզուներում կան *g – w/v* լծորդության դեպքեր, որտեղ նախնականը հետնալեզվային պայթականներն են, որոնցից առաջացել են շրթնային հնչյուններ՝ ձայնորդ, շփական և նույնիսկ պայթական [10,11]: Միևնույն օրինաչափությունն է նկատվում հին անգլերեն և նոր անգլերեն բառերի համեմատության ժամանակ [12,13]:

Հայերենի ստուգաբանության առանձնահատկություններն են.

1. Բառապաշարի որոշ շերտերի հնչյունական և իմաստային տարբերությունները այլ հ.-ե. լեզուների համեմատ: Հատկապես խնդրահարույց են հ.-ե. *v/w* – հայ. *q*, հ.-ե. *p* – հայ. *h/j/Ø*, հ.-ե. *s* – հայ. *h/Ø*, համապատասխանությունները:

2. Տիպաբանական և կառուցվածքային որոշակի տարբերություն հ.-ե. այլ լեզուներից, մասնավորապես, աշխարհաբարի նկատելի կցական կառուցվածքը:

3. Նախածանցների սակավությունը՝ հ.-ե. այլ լեզուների համեմատ:

4. Բաղաձայնների կուտակման բացակայությունը վանկի սկզբում:

5. Հայերենի որոշ արմատների խիստ յուրահատուկ դիրքը իմաստային դաշտում:

Եթե հայերենը հնդեվրոպական լեզու է, ապա այս տարբերություններն ինչ-որ կերպ պետք է բացատրվեն: Հայերենի ստուգաբանությունը պահանջում է տիպաբանական փաստերի ավելի լայն կիրառում, համեմատաբանության մեջ ընդունված որոշակի կարծրատիպերի անտեսում և այլ լեզվաընտանիքների լեզվական նյութի հնարավորինս մեծ ընդգրկում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Джаукян Г.Б.** Очерки по истории дописьменного периода армянского языка.- Ер., 1967.- С. 298-300.
2. **Мельничук А.С.** О всеобщем родстве языков мира// Вопросы языкознания.- 1991.- № 2.- С. 28-29.

3. Նիկողոսյան Գ. Հայ-ֆիննաուգրական լեզվական առնչություններ.- Երևան 2011.- էջ 155-156:
4. Ղափանցյան Գ. Հայոց լեզվի պատմություն: Հին շրջան.- Երևան, 1961.- 362 էջ:
5. Աճառյան Հ. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2. Դերանուն.- Երևան, 1954:
6. Նիկողոսյան Գ. Անձնական դերանունների ծագումը,
7. Бабаев К. О происхождении личных местоимений в языках мира// Вопросы языкознания.- 2009.- № 4.- С. 121.
8. Майтинская К.Е. Местоимения в языках разных систем.– М.,1969.
9. Andrew Kreiss. The Evolution of the Definite Article in Old High German// Journal of Germanic Linguistics.- 2014.- 26.2.- P. 127-156.
10. Ахметьянов Р. Г. Сравнительное исследование татарского и чувашского языков// Фонетика и лексика.- М., 1978.- С. 54-55.
11. Долгопольский А. Сравнительно-историческая фонетика кушитских языков.- М., 1973.- С. 322-337.
12. Նիկողոսյան Գ. Հայերենի և հնդեվրոպական մի շարք լեզուների տիպարանական համեմատության ուրվագծեր, ՊԲՀ, 2008:
13. Նիկողոսյան Գ. Հայ-ֆիննաուգրական լեզվական առնչություններ/ Թեկն. Ատենախոս.- Երևան, 2011.- էջ 39-40:

**Г.В. НИКОГОСЯН**

### **МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ЭТИМОЛОГИИ КОРНЕЙ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

Основным методом выявления этимологии корней в индоевропейском языкознании было и остается сравнение фонологически и семантически идентичных/схожих корней. При этом основополагающим фактором считались индоевропейские фонетические законы. С развитием ностратического языкознания и появлением новых фактов фонетические законы и соответствующие таблицы, принятые в индоевропеистике, могут быть пересмотрены. Исследования показывают, что в свое время недооценивались типологические факты, а также не принимались в расчет случаи семантического и грамматического сдвига. Наличие этимологических пучков не только в разных языках, а также в диалектах одного языка stanят под сомнение идею первостепенности фонетических законов.

**Ключевые слова:** ностратическое языкознание, фонетические законы, грамматический и семантический сдвиг, этимологические пучки.

G.V. NIKOGHOSYAN

**METHODOLOGICAL FUNDAMENTALS OF ETYMOLOGY OF  
ARMENIAN ROOTS**

A lexical investigation of the Armenian roots has been performed. It is shown that in Indo-European linguistics, the realities related to the semantic and grammatical shift have not been considered properly. The etymological bunches of roots in different languages are considered.

**Keywords:** nostratic linguistics, phonetic laws, etymological semantic and grammatical shift, etymological bunches.

УДК 37.035.4 :821«312» (479.25)

Л.А. САРКИСЯН

**СВЯЗЬ ПОКОЛЕНИЙ, АРМЯНСКИЕ ТРАДИЦИИ И ЧУВСТВО  
РОДИНЫ В КНИГЕ НАРИНЭ АБГАРЯН «С НЕБА УПАЛИ ТРИ  
ЯБЛОКА»**

Представлены четыре основные темы творчества известной писательницы Наринэ Абгарян: чувство Родины, детство, исторические традиции армянского народа и война. Именно эти четыре темы, причудливо переплетаясь и сливаясь в ее произведениях, делают их пронзительными, близкими и такими необходимыми нам всем сегодня.

**Ключевые слова:** Наринэ Абгарян, Родина, «С неба упали три яблока», война, творчество, писательница.

*«Бабушка говорила – ближе всех к небесам старики и дети. Старики потому, что им скоро уходить, а дети потому, что недавно пришли. Первые уже догадываются, а вторые еще не забыли, как они пахнут, небеса.*

*Я была маленькая и глупенькая. Слушала вполуха, вертелась. Мне казалось – ну чего тут сложного? Небеса пахнут воздухом. Иногда теплым, иногда колючим. Или дождем, когда идет дождь. Или снегом. И вообще, воооон они, совсем рядом, встал на цыпочки – и прикоснулся. Когда живешь на краю синего ущелья, это ведь совсем не сложно – дотянуться до небес».*

Это отрывок из книги Наринэ Абгарян «С неба упали три яблока». С творчеством известной писательницы Наринэ Абгарян мы ознакомились несколько лет тому назад и сразу задумались о том, что одно или два из ее произведений необходимо включить в школьную программу. Потом выяснилось, что в некоторых школах выборочно проходят эти произведения. Например, в одной из школ в пятом классе проходят «Манюню».

Вначале, при знакомстве с творчеством Абгарян, кажется, что она принадлежит к типично «женским» авторам, и ее стиль должен быть похож на стиль Виктории Токаревой. Но оказалось не так.